ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2022/76

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 նոյեմբերի 2022 թ. N 76

ՀԱԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «**Հաաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամ** /ՀԳՊԱ/

Գործունեության հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Իսահակյան 36

Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝ **4 տարի ժամկետով՝ 15.02.2018թ-15.02.2022թ**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2022 թվականի նոյեմբերի 15-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց՝ **Հաաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի** (այսուհետ՝ ՀԳՊԱ, Ակադեմիա, բուհ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝ 24 հունիսի 2021թ.
ինքնավերլուծության ներկայացում՝ 25 հունվարի 2022 թ.
փորձագիտական այցի իրականացում՝ 25-28 ապրիլի 2022 թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում՝ 25 հուլիսի 2022 թ.
թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում՝ 18 հոկտեմբերի 2022 թ.

Հաաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից անբավարար են գնահատվել **«Կառավարում ու վարչարարություն»** և **«Արտաքին կապեր և միջազգայնացում»** չափանիշները:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով Ակադեմիայի կողմից ներկայացված ինքնավերլուծությունը, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ՀԳՊԱ-ի ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. ***Ակադեմիան հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում***

Առաջարկվող մասնագիտության կրթական ծրագրերն ունեն հստակ սահմանված նպատակներ, որոնք համահունչ են համալսարանի առաքելությանը և համապատասխանում են շահակիցների պահանջներին:

Վերանայվել են բակալավրիատի ՄԿԾ-ները, վերանայման գործընթացում ներգրավվել են գործատուներ և ներքին ու արտաքին այլ շահակիցներ: ՄԿԾ-ներում առկա են դասավանդման, ուսումնառության, գնահատման մեթոդներ, ներկայացված է դրանց համապատասխանեցումը կրթական ծրագրի ուսումնառության վերջնարդյունքներին, առկա են դասընթացների կրթական ծրագրի ուսումնառության վերջնարդյունքներին համապատասխանեցման, կրթական ծրագրի ուսումնառության վերջնարդյունքների և ՀՀ ՈԱԾ-ի համապատասխանեցման աղյուսակներ:

Ներդրվել է մոդուլային համակարգը, ինչը հնարավորություն է տալիս փոխկապակցել ընդհանուր վերջնարդյունքներ ապահովող դասընթացների դասավանդումը, ուսումնառությունն ու գնահատումը: Նոր ՄԿԾ-երը գործարկվել են 2021-2022 ուստարվանից: Ըստ նոր կրթական ծրագրերի՝ վերանայվել են միայն բակալավրի 8 ծրագրերի 1-ին տարվա դասընթացները, ուստի ՀԳՊԱ-ն բավական անելիքներ ունի կարճ ժամանակահատվածում մյուս տարիների դասընթացները պլանավորելու և իրականացնելու նույնկերպ, ինչպես մեկնարկած ՄԿԾ-երի դասընթացները: Ակադեմիայում կիրառվում են կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման և վերանայման մեխանիզմներ:

Ակադեմիան ունի իր առաքելությանը հասնելու և ՄԿԾ-երի նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ: Կրթական ծրագրերն իրականացնում են համապատասխան որակավորում, գիտամանկավարժական և ստեղծագործական փորձառություն ու համարում ունեցող դասախոսները:

Ակադեմիայում 2021 թվականին հաստատվել է «Դասախոսի տարակարգերի մասին կանոնակարգը», որը սահմանում է պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման չափանիշները: Առկա է ՊԴ կազմի, ինչպես նաև տարբեր ստորաբաժանումների

աշխատակիցների ընտրության քաղաքականություն: Ակադեմիան քայլեր է ձեռնարկում ՊԴ կազմի կայունության և սերնդափոխության ապահովման ուղղությամբ:

Նախորդ հավատարմագրումից հետո արդիականացվել են որոշ լաբորատորիաներ, հնարավորինս թարմացվում է ռեսուրսային բազան՝ ըստ վերհանված կարիքների, ընդհանուր առմամբ առկա է կրթական ծրագրերի իրականացման անհրաժեշտ միջավայր, էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման աշխատանքները շարունակական են՝ ընդգրկելով ավելի շատ գործընթացների համակարգված փաստաթղթավորում, ուսանողների և անձնակազմի համար առկա է անվտանգ և ապահով միջավայր:

2. Կառավարման և որակի ապահովման համակարգերը հիմնականում աջակցում են որակավորումների շնորհման արժանահավատության բարելավմանը

ՀԳՊԱ-ն ունի հստակ ձևակերպված տեսլական և առաքելություն, որոնք արտացոլում են բուհի առանձնահատկությունը և նպատակաուղղված են արվեստի ոլորտում բարձրորակ մասնագետների պատրաստմանը:

Կառավարման ոլորտում բուհն ունի անելիք իր գործընթացների գնահատման առանցքային ցուցիչների բարելավման ուղղությամբ:

Թեև բուհի կառավարման համակարգն ապահովում է որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, ռեսուրսներ, սակայն ներքին շահակիցներին առնչվող որոշումների կայացման հարցերում առկա են խնդիրներ, բացակայում է միջնաժամկետ պլանավորումը: Կարճաժամկետ պլանավորումներն իրականացվում են վարչական ստորաբաժանումների տարեկան պլանների ձևով: Իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրությունը և որոշումներ կայացնելիս հավաստի տվյալների վրա հիմնվումը ևս հստակ չէ, առկա են առանձին ուղղություններով որոշակի աշխատանքներ, սակայն դրանք համակարգային ամփոփ վերլուծության չեն ենթարկվում և հիմք չեն հանդիսանում ՌԾ-ի համար: Ակադեմիայում քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարության որակի կառավարման ՊԻԳԲ սկզբունքը ներդրված է ռազմավարական կառավարման մակարդակով, սակայն գործընթացները կա՛մ դեռևս իրականացման փուլում են, կա՛մ գնահատման. գնահատումից բարելավում անցումները դեռևս տեսանելի չեն:

Թեև որակի ապահովումը նախորդ շրջափուլի համեմատ էապես բարելավվել է, շատացել են որակի ապահովման գործընթացներն ու քանակապես աճել է գործիքների թիվը, սակայն այդուհանդերձ, որակի ապահովման առջև կառավարման համակարգի կողմից դեռևս չի դրվում առավել իրատեսական պլանավորման համար անհրաժեշտ տվյալներ դուրս բերելն ու խնդիրներ վերհանելը, ինչն էլ երբեմն հանգեցնում է խնդիրների պլանավորման կամ պլանավորածը գնահատելու ժամանակ:

Այսպիսով որակի ապահովման ներկայիս գործիքակազմով ու գործառույթներով, կառավարման ներկայիս մշակույթով ՀԳՊԱ-ն ապահովում է իր առաքելության իրականացումն ու, մասնավորապես, կրթական ծրագրերի վերջնարդյունքների ձեռքբերումը, սակայն ներկայիս ժամանակներին համահունչ զարգանալու համար իր ունեցած ռեսուրսներն օգտագործելով բարելավման գործընթացների հստակ պլանավորման անհրաժեշտություն կա:

3. *Միջազգայնացումն ու հետազոտական գործունեությունը զարգացման միտումներ ունեն և աջակցում են որակավորորումների արժանահավատ շնորհմանը*:

ՀԳՊԱ-ն ունի ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ, ունի նաև նախապատրաստական բաժին: Ակադեմիայում գործում է ուսանողական խորհուրդ, մշակված է ուսանողների իրավունքների պաշտպանման քաղաքականություն, ուսանողի խնդիրները վարչակազմին ներկայացնելու, ուսանողների

սոցիալական աջակցման ընթացակարգեր: Հատուկ կարիքներով ուսանողների համար ևս բարելավվում են պայմանները:

Բուհը քայլեր է իրականացնում ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների բարելավման ուղղությամբ:

Ազատ ստեղծագործական միջավայրում ուսանողները հնարավորություն ունեն առավել բաց ու անմիջապես շփվել արվեստի ոլորտի ճանաչված ներկայացուցիչների հետ:

ՀԳՊԱ-ն կարևորում է հետազոտությունը և այն բուհի ռազմավարության երեք ուղղություններից մեկն է: Որպես ռազմավարական նպատակ ակադեմիան սահմանել է հետազոտական–ստեղծագործական գործունեության իրականացում: Բուհն արվեստաբանության, կերպարվեստի, կիրառական արվեստի և դիզայնի ՄԿԾ-ներում խթանում է նոր գաղափարների և հասկացությունների ձևավորմանը: Այս մոտեցումը նպաստում է ստեղծագործական-գիտական մտքի զարգացմանը, ինչպես նաև ազգային մշակույթի տարածմանը:

Արվեստի գծով հետազոտություններն ունեն առանձնահատկություններ, որոնք արտացոլվում են ստեղծագործական գործունեության ու դրանց արդյունքների մեջ: Ակադեմիայում հետազոտության ոլորտին այս տեսանկյունից դիտելիս՝ բնական է փաստել, որ հետազոտությունը կատարվում է: Սակայն բուհը պետք է որոշակիացնի իր անելիքները միջազգային կրթական ու հետազոտական ծրագրեր իրականացնելու, կարողությունների զարգացման դրամաշնորհներ ներգրավելու, բենչմարքինգը դասընթացների մակարդակ տեղափոխելու ուղղություններով:

Իրականացվում են արվեստաբանական և կիրառական բնույթի հետազոտություններ: Հետազոտական ոլորտում Ակադեմիայի հետաքրքրություններն ու հավակնությունները փաստաթղթավորված են. դրանք արտահայվում են հետազոտության ռազմավարության մեջ, ստեղծվել են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման հիմքեր:

Բուհն ունի հետազոտության ոլորտի ռազմավարություն, որը ներկայացված է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորմամբ: Հետազոտությունների արդյունքները ներառվում են նաև ուսումնահետազոտական գործընթացում:

Ակադեմիայի դասախոսների և ուսանողների հետազոտական/ստեղծագործական գործունեությունը հանրայնացնելու համատեքստում կարևոր են նաև բուհի «Ալբերտ և Թովէ Բոյաջյան» ցուցասրահում պարբերաբար կազմակերպվող ցուցադրությունները:

Ակադեմիան նախորդ հավատարմագրումից հետո որոշակի քայլեր է արել արտաքին կապերի և միջազգայնացման ակտիվացման ուղղությամբ: Սակայն միջազգայնացման պլանավորման և գնահատման գործընթացները խնդրահարույց են, չեն իրականացվում միջազգային կրթական, հետազոտական, օտարալեզու ծրագրեր, ցածր է անգլերենի տիրապետման մակարդակը: Բուհի կողմից ֆինանսական ռեսուրսներ չեն տրամադրվում միջազգայնացման ուղղությունը ռազմավարական մոտեցմամբ պլանավորելու և իրականացնելու համար, նախանշված չեն ոլորտի զարգացման առաջիկա ուղիները, գնահատված չեն բուհի հնարավորությունները:

4. Առկա են թերացումներ, որոնք առանցքային ազդեցություն չունեն որակավորման արժանահավատ շնորհման տեսանկյունից, ստեղծված են հիմքեր բարելավումների համար:
5. Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագիրը հիմնականում իրատեսական է և իրականացումը կբերի որակական բարելավումների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Հաաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:**

2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով **«Կառավարում ու վարչարարություն»** և **«Արտաքին կապեր և միջազգայնացում»** չափանիշներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը:
3. **Հատուկ ուշադրություն դարձնել.**
   - ռիսկերի կառավարման պլանի մշակման անհրաժեշտությանը՝ տարբեր իրավիճակներում ռիսկերի կառավարման հստակ լուծումներով,
   - ԳԱՑ լրակազմը որակական բնույթի ցուցիչներով համալրելու անհրաժեշտությանը,
   - վերլուծությունների, հստակ քանակական և որակական տվյալների վրա հիմնված որոշումների կայացմանը և հաշվետվությունների իրականացմանը,
   - հետազոտության պլանավորման և գնահատման համակարգի բարելավմանը՝ սահմանելով կատարողականի իրատեսական ցուցիչներ,
   - դասախոսական կազմի ստեղծագործական/հետազոտական աշխատանքը խրախուսելու որոշակի մեխանիզմներ սահմանելու անհրաժեշտությանը ՝ կրթական գործընթացին փոխկապակցելու նպատակով,
   - որակի ապահովման՝ կառավարման, հետազոտության և միջազգայնացման ոլորտներում խորքային խնդիրները և ներուժը վերհանող մեխանիզմների ներդրմանը,
   - ուսանողների մոտ վերլուծական, ստեղծագործական և քննադատական կարողությունների զարգացմանը միտված ուսուցման կազմակերպմանը,
   - բոլոր գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլի կիրառմանը,
   - ուսումնառության և հետազոտության կապի ամրապնդմանը,
   - Ակադեմիայի կառավարման վրա որակի ապահովման համակարգի ազդեցության բարձրացմանը:
4. Կազմակերպել ՀԳՊԱ-ում իրականացվող մասնագիտության կրթական ծրագրերի ներքին աուդիտ արտաքին փորձագետների ներգրավմամբ:
5. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով Ակադեմիայի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
6. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել ՀԳՊԱ-ի գործունեության արդյունավետությունը՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:
7. Որոշումն ուժի մեջ է մտնում հավատարմագրման պետական գրանցամատյանում գրանցվելու պահից:

Հավատարմագրման Հանձնաժողովի
նախագահ **Ա. Սաղյան**
2022 թ. նոյեմբերի 25
ք.Երևան